№ 186 Հոկտեմբերի 23 (Նոյեմբերի 4) 1880 Հոկտեմբերի 23 (Նոյեմբերի 4) № 186

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաբարբարոսից գինում են ուղղակի
Տպագրատ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն բն ունդում է ամեն ինչում:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ժողովներ:—Նեղբին տեսութիւն: Ընդհանուր ուսուցչական ժողով Թիֆլիսում. Նամակ Շուշուց: Նամակ Նոր-Բայազետից: Նամակ Մօսվրայից: Նամակ Ղ. Պետերբուրգից: Ներքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

II

Այժմ դառնանք դէպի մեր ուսուցչական ժողովները և տեսնենք ի՞նչու և ի՞նչ նախապատրաստութիւններ են հարկաւոր մեզ:

Ամառը հաւաքվելու են ուսուցիչներ. կը հաւաքվեն մի երկու տարիւր մարդ, գուցէ աւելի կամ պակաս. կառաջարկվեն անթիւ հարցեր: Մենք չունենք պրոգրամներ ո՛չ տարրական, ո՛չ միջնակարգ, ո՛չ արական և ո՛չ իգական ուսումնարանների համար. մեր ուսումնարանների կազմակերպութիւնը մի խաւօս է ներկայացնում:

Մեր ուսուցիչները առաջին անգամ պէտք է հանդիպեն միմեանց, առաջին անգամ պէտք է իմանան միմեանց կարծիքները, առաջին անգամ պէտք է լսեն զանազան դատողութիւններ այլ և այլ հարցերի վերաբերութեամբ և վիճեն. այստեղ առաջին անգամ պէտք է իմանան թէ զանազան դպրոցներում այս կամ այն դասագիրքը է գործածվում և այլն և այլն:

Այսպիսի ընդհանուր ժողովներում մեծամասնութիւնը անշուշտ պէտք է լռէ, անկարելի է որ ամեն մէկը դատէ, վիճէ, որովհետև դա կը լինէր մի բաբիլոնեան խառնակութիւն. բոլոր հարցերը նոր են և բազմատեսակ, կարծիքներ անթիւ են:

Այս տեսակ ժողովներում կը հանդիսանան երկու երեք մարդ, նրանք կը վիճեն, մնացածները ականջները վեր թողած պէտք է լսեն: Գուցէ մի քանի իրը թէ որոշած հարցերի արձանագրութեան տակն էլ կը ստորագրեն, բայց ի՞նչ օգուտ: Նրանց չը յաջողվեց իրանց կարծիքը յայտնել այս կամ այն առարկայի մասին, այն կարծիքը չը մերժուց. նրանք վերադառնում են իրանց տեղը և շարունակում են իրանց գործը առաջուայ պէս:

Մեզ հարկաւոր է ամենքի կարծիքը, ընդհանուրի և ոչ անհատների ձայնը, մեծամասնութեան պահանջները. առաջ հարկաւոր է իմանալ՝ ի՞նչ կայ մեզանում և նա ի՞նչ դրութեան մէջն է և ապա մտածել. ի՞նչպէս պակասը լրացնել, վատը լաւացնել: Մենք համոզված ենք (և մինչև անգամ հաստատ գիտենք), որ կան ուսումնարաններ, որոնց մինչև անգամ գոյութիւնը մեր թեմական տեսուչներին յայտնի չէ, ուր մնաց նրանց լաւն ու վատը:

Մենք այդպիսի ժողովներով ոչինչ չենք որոշի, եթէ չենք աշխատի մեր ուսուցիչներին նախապէս միմեանց հետ ծանօթացնել, մեր այլ և այլ ուսումնարանների վրա գաղափար տալ և այլն և այլն: Մենք չունենք այնպիսի մտքով, որ կարողանար դրան ոչ թէ լեռվին, այլ մինչև անգամ մասամբ ծառայել. մեր գաւառական թղթակիցների ,,մեր ուսումնարանի գործը լաւ է գնում,, ,,մեր իգական դպրոցի բանը՝ բուրթ է,,, և այդ տեսակ խօսքերից շատ բան չես հասկանայ, ուսումնարանների վրա գաղափար չես կարող կազմել. մեզ հարկաւոր է ուրիշ միջոցի դիմել, մի միջոցին որը գուցէ շատերին խորթ թուի, բայց դա միակն է և մեր կարծիքով անհրաժեշտ է:

Միրզա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ընթերցողներին „Մշակի“ 142-դ համարից յայտնի կը լինի, որ օգոստոս ամսին (6-ին) Թիֆլիսի և գառառներից եկած ուսուցիչների մի խումբ պատահական կերպով ունեցաւ Դպրոցական դպրոցում երեք միմեանց եռևից մանկավարժական նիստ՝ դպրոցական խնդիրների վերաբերութեամբ ընդհանուր խորհրդաժողովներ անելու: Այդ ժողովներում ի միջև այլոց, ծնեց և մի բաղդաւոր միտք՝ կազմել 1881 թիւ ամառային արձակուրդին մի ընդհանուր ուսուցչական ժողով մեր դպրոցների ընդհանուր բարեկարգութեանց նպատակով, սորա համար, այդ ժողովը որոշեց՝ ներկայ 1880—81 ուսումնական տարուայ ընթացքում, թեմ. վերատեսուչ պ. Դ. Խարիտոնովի ընտրութեամբ, կազմել Թիֆլիսում երկու յանձնաժողով՝ ուսումնական—նախապատրաստելու ապագայ ընդհանուր ժողովի պարապելու խնդիրները և տնտեսական՝—հոգալու ընդհանուր ուսումնական ժողովի ծախքերը: Թեմ. վերատեսուչ պ. Դ. Խարիտոնովը սկսեց իր գործունէութիւնը հոկտեմբերի 6-ին, հրաւիրելով այդ երեկոյ, ժամի 7-ին, 42 անձինք, գլխաւորապես տեղւոյս երկսեռ դպրոցների ուսուցիչներ և տեսուչներ, նոյնպէս և մի քանի մասնաւոր անհատներ:

Ժողովը այդ երեկոյ պիտի զբաղվէր ուսումնական և տնտեսական յանձնաժողովների ընտրութեամբ:

Սկզբումը, ընդհանուր ժողովը յաջողվելու մասին, յայտնվեցան մի քանիների կողմից զանազան պնսիմիստական կարծիքներ, գլխաւորապէս ծախքի վերաբերութեամբ, բայց այդ չարագուշակ ամպը ինքն ըստ ինքեան փարատվեցաւ, երբ մէջ եկաւ աշխատանքի բաժանման գեղեցիկ սկզբունքը: Դժուար էր թեմական տնտեսական յանձնաժողովի համար՝ հայթայթել այն դուռմարը, որ պիտի ծախսվէր զանազան թեմերի բազմաթիւ ուսուցիչների վրա, բայց ժողովը երկար վիճաբանելուց յետոյ եկաւ այն եզրակացութեան, որ Թիֆլիսի տնտեսական յանձնաժողովը հոգալու է միմիայն Թիֆլիսի թեմի այն ուսուցիչների մի ամսուայ ճանապարհածախսը և սնունդը (բընական կայ), որոնց հոգաբարձութիւնները կամ հասարակութիւնները միջոց չունեն հոգալու այդ ծախքերը, որի համար և որոշվեցաւ ստանալ թեմ. վերատեսչից այդ տեսակ ուսուցիչների վիճակագրական թուերը: Բացի սորանից յանձնվեցաւ թեմ. վերատեսուչ Դ. Խարիտոնովանցին՝ զրագրութիւններ բացելու միւս թեմերի վերատեսուչների հետ՝ տեղեկանալու, թէ կը կամենան արդեօք այդ թեմերի ուսուցիչները, վերոյիշեալ պայմաններով մասնակցելու ընդհանուր ուսուցչական ժողովին, այնպէս որ, եթէ միւս թեմերի հոգաբարձութիւնները, կամ հասարակութիւնները չը յանձն առնեն իրանց ուսուցիչների մի ամսուայ ճանապարհածախքը և սնունդը հոգալու, այն ժամանակ ժողովը պիտի սահմանափակվի միմիայն Թիֆլիսի թեմի ուսուցիչներով: Այսպէս, այդ երեկոյ ժողովը հասաւ իր նպատակին ընտրելով տնտեսական (5—6 հոգուց) և ուսումնական (30 հոգուց) յանձնաժողովը:

Հոկտեմբերի 13-ին, երեկոյեան ժամի 7-ին, գարձեալ Դպրոցական դպրոցի մի սենեակում հաւաքվեցան առաջին անգամ ուսումնական յանձնաժողովի անդամները իրանց անելիքի վրա խորհելու: Այդ ժողովը նոյնպէս, կարելի է ասել, ունեցաւ իր արդիւնաւոր փախճանը: Այդ ժողովում ընտրվեցան չորս մասնաժողովներ—

ա) Ընդհանուր ուսուցչական ժողովի պարապմանց համար մի ծրագիր կազմող յանձնաժողով հետևեալ անձինքներից՝—Աշտարի Խաչատուր, Գէորգ Խարիտոնդարեանց, Ստեփանոս ա. ք. Տէր-Ստեփանեանց, Գէորգ Տէր-Ղուկասանդրեանց և Կարապետ Թումանդրեանց:

բ) Ծրագրի կազմելու համար երեքամեայ դասընթացքով ծրագիր կազմող յանձնաժողով հետևեալ անձինքներից՝—Կարապետ Թումանդրեանց, Աշտարի Տէր-Յակոբեանց, Յով. Զիգիանեանց, Աշտարի Գուլլաղեանց և տէր-Աբրահամ Խաղբատեանի:

գ) Միջնակարգ դպրոցների համար ծրագիր կազմող յանձնաժողովը հետևեալ անձինքներից՝—Աշշակ Նահապետեան, Ստեփանոս Պալասանեան և Նիկ. Խոսրովեանց:

Ընդհանուր հարցեր որոշող և թեմական վերատեսուչներին հաղորդող (վաղօրօք մշակելու համար) մասնաժողովը հետևեալ անձինքներից՝ Գրէգսանդր Թիշմիշեանց, Ա. Եղեկեանց և Յ. Նազարեանց: Առ այժմ բաւական ենք համարում այս համառօտ տեղեկութիւնը հաղորդելով հասարակութեան և մանաւանդ մեր պաշտօնակիցներին, իսկ հետևեալ համարներում շուտ շուտ կը դառնանք դէպի այս ամենակարևոր խնդիրը:

Վերոյիշեալ չորս յանձնաժողովները իրանց աշխատութիւնները նախ՝ կը ներկայացնեն Թիֆլիսի ուսուցչական ժողովի քննութեան, իսկ յետոյ՝ ընդհանուր ուսուցչական ժողովին:

Թ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

9 Հոկտեմբերի

Ղարաբաղի աշխարհագրական գիրքը, նրա պաղարերութեան օրպիսութիւնը և բնակիչների գիւղատնտեսական արհեստների ժիր ու վարժ լինելը մանրամասնօրէն նկարագրելու հարկաւորութիւն չենք զգում, քանի որ շատ է խօսված այս մասին թէ մամուլի անցեալներումս լրագրութեան մէջ, և թէ վաղ ժամանակները պատմագրանց մէջ: Բայց իմ նպատակս է Ղարաբաղի վրա մի կարճ հայացք ձգել և մի քանի մթին կէտեր պարզել, իմանալու համար թէ ինչ զգալի ազդեցիկ երևոյթ կայ սրա տնտեսական հանգամանքներում, և թէ պատճառները ի՞նչ են:

Թէ Անդրկովկասում կայ մի բերրի, արգաւանդ և կլիմայի ամենայն յարմարութիւններով ճոխ երկիր, յայտնի է որ բոլորից առաջնակարգ ասպիճանում եղողը Ղարաբաղն է: Թէ կայ Անդրկովկասում մի ժողովուրդ, որը կարող է իր քրտինքի գնովն հողից հրաշալիքներ արտադրել: Հանրածանօթ իրողութիւն է, որ զրանից յետագէմ չէ իր կուլտուրական զարգացմամբը Ղարաբաղն ազգաբնակութիւնը: Ղարաբաղի գիւղացին խորշել է անգրագիտութիւնից, և կը խորշէ. նա իր ընտա-